կական միաբանության, Վենետիկի Մխիթարյանների գործունեության մեջ հայ նոր գրականության սաղմերը հանդես են եկել նաև 18-րդ դարի կեսերից։

Գիտաշխատող Հակոբ Մարգարյանի զեկուցումը՝ «Տիգրան Կամսարականի գրական ժառանգությունը» վերնագրով, ցույց տվեց, որ բացի Թեոդիկում Կամսարականի հիշատակած իր հինգ կեղծանուններից («Անցորդ», «Հոգեզրիչ», «Հայկակ», «Փյունիկ» և «ZZ»), Տիգրան Կամսարականը իր երկարատև ստեղծագործական կյանքի ընթացքում օգտագործել է ևս 7 կեղծանուն («Սվքիդն», «Ասեղ», «Մոլորակ», «Ենեա», «Ենեստոր», «Բ. Տեր-Զաքարյան» և «Z»)՝ որոնցով ստորագրել է իր քրոնիկները, պատմվածքները, հոդվածները։ Կամսարականի գրական ամբողջ ժառանգությունը այժմ անցնում է 130 անունից, այնինչ դեռ վերջերս ընթերցող և գիտական հասարակայությունը հայտնի էին նրա՝ ընդամենը մի վեպն ու երեք պատմվածքները։ Հասկանալի է, որ այս բոլորի հետևանքով՝ էլ ավելի է ամբողջանում ու պարզվում արևմտահայ ռեալիստի ստեղծագործական դիմանկարը։

«Միջնադարյան մի նշանավոր տաղի հեղինակի հարցի շուրջը» թեմայով, հազորդում արեց բանասիրական գիտությունների թեկնածու Մայիս Ավդալբեկյանը։ Նա քննության առարկա էր դարձրել դեռ միջնադարից մեզ հասած և հետագայում բազմաթիվ տարբերակներ ու հրատարակություններ ունեցող «Ամեն առավոտ և լույս» գողտրիկ տաղը, որը բանասեր Ասատուր Մնացականյանը համարել է հայկական ժողովրդական ստեղծագործություն և որպես այդպիսին դնահատել «Հայկական ժողովրդական երգերը» խորագիրը կրող ժողովածուում։ Զեկուցողը ցույց տվեց, որ վերոհիշյալ տաղը խաչիվ արտահայտված անհատական ստեղծագործություն է և պատկանում է 16-րդ դարի հայ բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցու գրչին։

Մ. ՇՏԻԿՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝

ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ 20-ԱՄՅԱԿԻՆ

Լրացավ ֆաշիստական Գերմանիայի դեմ սովետական ժողովրդի մղած հերոսամարտն սկսվելու քսանամյակը։ Մեր ժողովրդի անօրինակ սխրագործությունները դարեդար կմնան անմոռաց։ Սրբազան է մեր հայրենիքի անկախության և ազատության, ամբողջ աշխարհի մարդկության երջանկության համար զոհված մարտիկների հիշատակը, որի հավերժացմանն էր նվիրված 1961 թ. հունիսի 19-ի ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի միացյալ դիտական սեսիան։

Սեսիան ներածական ճառով բացեց Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի դիրեկտոր, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Պ. Աղայանը։

Նշելով մարդկության պատմության մեջ սովետական ժողովրդի մասսայական հերոսության, կայունության և արիության օրինակը, նա ընդգծեց, որ այդ պատերազմը սոցիալիստական հասարակության կենսունակության, հզորության ամենամեծ փորձությունն էր։ Մեր հերոս ժողովուրդը հարազատ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ շախշախեց ֆաշիզմը և Եվրոպայի ժողովուրդներին փրկեց ստրկացումից։ Հիտլերյան Գերմանիայի դեմ տարած Սովետական Միության հաղթանակի շնորհիվ ծնունդ առան սոցիալիստական նոր պետություններ, աշխարհի տարբեր մասերում փլրվեցին գաղութատիրության շղթաները և շատ ժողովուրդներ ոտքի ելան ու բռնեցին ազգային ինքնուրույնության ու անկախության ուղին։ Ներկայումս մեր ժողովուրդը զբաղված է խաղաղ աշխատանքով։ Նա բուժել է պատերազմից ստացած իր վերքերը և հաղթարշավի ելել դեպի կոմունիզմի շողշողուն գագաթները։ Սոցիալիստական երկրների հետ միասին այժմ մեր պետությունը խաղաղության ամենահուսալի պատվարն է ամբողջ աշխարհում։

«ՍՄԿՊ-ն Հայրենական Մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակների կազմակերպիչ» թեմային էր նվիրված պատմական գիտությունների դոկտոր Ա. Ն. Մնացականյանի զեկուցումը։ Համառոտակի շարադրելով հիտլերյան Գերմանիայի կողմից Սովետական Միության վրա ուխտադրժորեն հարձակվելու պատմությունը, զեկուցողը նշեց, որ պատերազմը պատահական չէր։ Այն կապիտալիզմի ծնունդն էր, համաշխարհային իմպերիալիզմի կողմից խրախուսված հակակոմունիստական բոլոր ուժերի պայքարն էր աշխարհում միակ սոցիալիստական երկրի դեմ։ Զեկուցողը նշեց նաև, որ ղեկավարելով հիտլերյան Գերմանիայի դեմ սովետական ժողովրդի մղած պայքարը, Կոմունիստական պարտիան սովետական ժողովրդին

ցույց տվեց Հայրենիքի վրա կախված մահացու վտանգը և նրան ոտքի հանեց Հայրենական Մեծ պատերազմի, սովետական մարդկանց ոգեշնչեց մարտական սխրագործությունների և անձնվեր աշխատանքի, կազմակերպեց պարտիզանական հզոր շարժում։ Զեկուցման մեջ հարուստ փաստերով ցույց տրվեց, որ Կոմունիստական պարտիայի ճիշտ քաղաքականությունն ու ստրատեգիան, նրա գաղափարական-դաստիարակչական և կազմակերպչական աշխատանքը թիկունքում ու ռազմաճակատում, սովետական մարդկանց մասսայական հերոսություններ՝ ապահովեցին սովետական ժողովրդի ու բանակի հաղթանակը Հայրենական Մեծ պատերազմում։ Մնացականյանը այնուհետև կանգ առավ պատերազմի ընթացքում լենինյան ազգային քաղաքականության հարցի վրա։ Նշելով, որ Սովետական Բանակի շարքերում կողք-կողքի կռվում էին Սովետական Միության չորս ՕՍ ազգերի ներկայացուցիչներ, նա փաստերով հաստատեց, որ Սովետական Միության դեմ անգլո-ֆրանսո-ամերիկյան իմպերիալիզմի նախապատրաստած և ֆաշիստական Գերմանիայի կողմից սանձազերծած պատերազմն ավարտվեց իմպերիալիստների համար չնախատեսված հետևանքներով. հաղթեց ռասաների և ազգերի իրավահավասարության սովետական գաղափարախոսությունը, ժողովուրդների բարեկամության գաղափարախոսությունը։

Իմպերիալիստները հույս ունեին, թե կոչնչանա սոցիալիզմի երկիրը, իսկ իրականում հակասական ու անուղղելի կորուստ ունեցավ կապիտալիստական սիստեմը։ Նրանից անջատվեցին Լեհաստանը, Չեխոսլովակիան, Հունգարիան, Բուլգարիան, Ռումինիան, Այրանիան, Բերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկան և աշխարհի ամենամեծ բնակչություն ունեցող երկիրը՝ Չինական ժողովրդական Ռեսպուբլիկան։ Այդ երկրներում հաստատվեցին ժողովրդա-դեմոկրատական կարգեր և Սովետական Միության հետ միասին կազմեցին սոցիալիզմի միասնական ու հզոր լագերը։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ռազմաճակատին օգնություն ցույց տալու գործում Հայաստանի Կոմպարտիայի գլխին էր նվիրված պատմական գիտությունների թեկնածու Վ. Զաքարյանի զեկուցումը։

Զեկուցման մեջ նշվեց, որ Հայրենական Մեծ պատերազմին ակտիվորեն մասնակցեց նաև ամբողջ հայ ժողովուրդը և պատվով բռնեց այդ թեմությունը։ Հայաստանի Կոմպարտիան պատերազմի հենց առաջին օրերից հիմնովին վերակառուցեց իր աշխատանքները և Սովետական Հայաստանի արդյունաբերության ու գյուղատնտեսության ողջ նկամուտները ներգրեց պատերազմի հաղթական ավարտի գործին։ Զեկուցողը նշեց, որ պատերազմի առաջին իսկ կոչով ռեսպուբլիկայի կոմունիստների 48 տոկոսը մեկնեց բանակ և համալրեց սովետական ռազմիկների շարքերը։ Մինչև 1941 թ. հուլիսի 12-ը ռեսպուբլիկայի բաղաքներում և շրջաններում ստեղծվեցին ժողովրդական աշխարհազորներ, որոնք վերածվեցին ռազմաճակատը համալրող մարտական դրպրոցների։ Պատերազմի տարիներին Հայաստանի աշխարհազորների շարքերում ընդգրկվեցին ավելի քան 320 հազար բանվորներ, կոլտնտեսականներ, ծառայողներ, գիտության, գրականության, արվեստի աշխատողներ և ուսանողներ։

Զեկուցողը հանգամանորեն պատմեց նաև ռեսպուբլիկայում ստեղծված երկրի պաշտպանության ֆոնդի մասին։ Պատերազմի առաջին տարիներին ռեսպուբլիկայի աշխատավորները արդեն պաշտպանության ֆոնդն էին մուծել ավելի քան 10 միլիոն ռուբլի կանխիկ գրամ և մեծ քանակությամբ անասնապահական ու գյուղատնտեսական մթերքներ, իսկ ռեսպուբլիկայի կոլտնտեսությունները «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյան համար մուծեցին 38 միլիոն ռուբլի։

Զեկուցողը նշեց նաև՝ թշնամու դեմ հաղթանակն ապահովելու գործում հայ կանանց կատարած գերի մասին։ Կանայք թիկունքում փոխարինեցին ռազմաճակատ մեկնածներին և արդեն 1942 թվականին արդյունաբերության մեջ նրանք կազմում էին բանվորների ավելի քան 54 տոկոսը։ Ուշագրավ փաստեր բերվեց նաև ռազմաճակատի շարքերով մտահոգված հայ ինտելիգենցիայի կատարած աշխատանքների մասին։ Ռեսպուբլիկայի արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան նորանոր առաջարկություններով բարձրացնում էր աշխատանքի արտադրողականությունը։ Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի գործարանի ինժեներ Ռուբեն Մելքոնյանը մշակեց նոր տեխնոլոգիական սիստեմ, որի շնորհիվ 25 տոկոսով խնայվեց թանկարժեք հումքը և մեկ տարում ցեխը տվեց 19 միլիոն 848 հազար 950 ռուբլու խնայողություն։

Զեկուցողը կանգ առավ նաև այն հոգատարության վրա, որով պարտիան շրջապատում էր բանակայինների ընտանիքներին։

Սեսիայում «Հայերի մասնակցությունը պարտիզանական շարժմանը՝ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին» թեմայով զեկուցումը կարդաց Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կաբինետի վարիչ, պատմական գի-

տությունների թեկնածու Ե. Մ. Խալեյանը, ռեժ. Մ. Խալեյանի գեկուցումը հրապարակվում է «Տեղեկագրիր» սույն համարում)։

Այնուհետև, Հայրենական Մեծ պատերազմի մասին հետաքրքրքական հուշեր պատմեցին սեսիայի մասնակից, պատերազմի վետերաններ, պահեստի գիներալ-մայոր, Սովետական Միության Հերոս Աստանազ Կարապետյանը, Ֆրանսիայում առաջին սովետական պարտիզանական գնդի հրամանատարի տեղակալ, այժմ՝ Երևանի քազսովետի գործկոմի բաժնի վարիչ Բարգուշ Պետրոսյանը, բժշկական ծառայության մայոր, այժմ բժշկական գիտությունների դոկտոր Ռոզա Ջանջուսովան, 89-րդ Թամանյան դիվիզիայի «Կարմիր գինվորա թերթի խմբագիր, այժմ «Լենինյան ուղիով» ամսագրի աշխատակից, պահեստի փոխգնդապետ Սիմոն Նալբանդյանը և ուրիշներ։

Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ։